ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Դպրոցական եւ զինուորական խնդիրը Տաճկաստանում.

«Ֆիւզանգիոնը» (յուլիս 4) հաղորդում է որ պատրիարքների հաւաքական թագրիրը դպրոցների վերաբերութեամբ յուլիսի 2-ին խորհրդակցութեան են առել պատերազմական, դատական եւ կրթական նախարարները. գլխաւոր կէտերն ընդունուել են, իսկ զինուորական խնդիրների վերաբերեալ մանրամասնութիւնները անընդունելի են մնացել։ Ընդունուել է պատրիարքարանների վերին հսկողութիւնը վարժարանների վերայ, որոնք մասնաւոր հաստատութիւններ չպէտք է նկատուեն. այլ դրանց համար Մէարիֆը պէտք է բանակցի հայ, յոյն, բուլգար պատրիարքների հետ։

Պետական կրթական քննիչները այցելելով դպրոցները քննութեան արդիւնքը կառավարութեան միջոցով կը ներկայացնեն տեղական առաջնորդներին։ Քննութիւններին պետական քննիչներ պէտք է ուղարկուեն քրիստոնեայ դպրոցները, և եթէ ստուգուի, որ ընթացաւարտ աշակերտները պետական դպրոցների հաւասար տիրել են թուրքերէն, կը վայելեն պետական դպրոցները աւարտողների առաւելութիւնները։

Ուսուցիչներից նրանք կազատուեն զինուորագրութիւնից, որոնք արձանագրուած են կրթական նախարարութեան մէջ։ Զինուորագրութեան մէջ ինչ արտօնութիւն ունեն Իսլամ վարժարանների ուսուցիչները, նոյնը կունենան ոչ իսլամ վարժարաններինն էլ։

Ամէն մի բանակի մէջ իւրաքանչիւր հասարակութեան պատկանող այցելու հոգևոր պաշտօնեայ պէտք է կարգուի։

Մինչև այսօր սպաները բանակի մէջ դիմում էին զին-

ուրիշներին ասելով. «Գալ որ իսլամ է քո». այսուհետև ամեն տեղ «իսլամ» բառի տեղ՝ «Օսմանցի» բառը պէտք է գործածուի։

Քրիստոնեայ հոգևորականներից զինուոր պէտք է չառնուի. և ինչ օրէնք որ կիրակուում է իսլամ հոգևորականների համար, նոյնը պէտք է լինի քրիստոնեայ եկեղեցականների համար։

Այս խորհրդակցութիւնների արդիւնքն ու տուած որոշումները, ասում է Բիւզանդիոն, հաւանօրէն մի պաշտօնագրով կը հաղորդուի նախարարների խորհրդին և վարչապետի մի թէզքէրէով կառավարութեան պատասխանը կը ծանուցուի պատրիարքարաններին։

Կալուածական եւ հողային խնդիրներ.

Յուլիսի 1-ին Քազաքական ժողովում Տեղապահ Սրբազանը զեկուցել է մի օր առաջ Բարձր. Դրան և Էվգաֆի ու Կրթական նախարարներին իւր արած դիմումների արդիւնքը։ Տեսակցութեան ժամանակ երկարօրէն խօսուել է Զարսանջակի և միւս հողային խնդիրների Եէդի—Գուլէի ագարակի, Ատանայի բանտարկեալների, Հասան-պէյլիի եկեղեցու շինութեան վերայ։ Ժողովը հարկ է տեսել բոլոր խնդիրների մասին էլ նոր գրաւոր և բերանացի դիմումներ անել և որոշել է յուլիսի 4-ին նկատողութեան առնել այս մասին գրուածները ու ներկայացնել կառավարութեան։

Մինչև այսօր սովորութեան համեմատ վանական և եկեղեցական կալուածները մի մի երևակայական անունով էին արձանագրուում կառավարութեան մատեաններում. այսպէս Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին պատկանող Եդի—Գուլէի ագարակը գրուած էր «Յակոբ Զեքեթեան», ներկայացուցիչ կարդուած էր Յակոբ վարդապետ Շահբաղեան. վերջինիս մահուամբ կառավարութիւնը մանրիւլ-անտէր նկատելով ագարակը՝ գրաւել է։

Երուսաղէմատան մէջ եղած գրաւոր փաստերի հիման վերայ, որ ագարակը Յակոբ վարդապետ Շահբաղ-

լեանի Ծնունդից շատ առաջ Յակոբը Զեբեթեանի անունով Ս. Յակոբեանց վանքի սեպհականութիւն էր, Խառն Ժողովը որոշել է իւր նոր դիմումի մէջ ասել, որ եթէ բարոյական անուններըը այսպէս խեղաթիւրուեն և անձեր փնտռուի, հարկ կը լինի մեր եկեղեցական բոլոր հաստատութիւնները փակել։

Երուսաղէմի պատրիարքի ընտրութիւն.

Երուսաղէմի պատրիարքական Տեղապահ Սրբազանը խնդրում է փութացնել Երուսաղէմի պատրիարքի ընտրութիւնը մի պատուիրակ ուղարկելով վանքում տիրող խառնաշփոթութիւններին վերջ տալու համար։ Խառն Ժողովը որոշել է Հայկ էֆ. Խօճաասլանեանին պատուիրակ կարգել, յանձնարարելով տեղումը ստուգել Երուսաղէմի հաշուական խնդիրները, և ճշդել թէ հարկ է անմիջապէս պատրիարքական ընտրութիւն կատարել թէ առաջ միաբանութեան ներքին կարգադրութեան պէտք կայ։

Առաջնորդական խնդիր.

Յունիսի 24-ին Խառն Ժողովը ընդունելով Ադրիանուպօլսի առաջնորդ Տ. Սրբէն վարդապետ Վեհունու հրաժարականը յանձնարարեց Կրօնական Ժողովին եռանունը ցանկ պատրաստել Կեսարիայի և Ադրիանուպօլսի առաջնորդութիւնների համար. և Բրուսայի առաջնորդական տեղապահ կարգեց Վարդան վարդապետ Գասպարեանցին։ Կրօնական ժողովը յուլիսի 6-ին ժողովում առաջնորդական ընտրելի նշանակեց Ադրիանուպօլսի համար Տ. Տ. Գնել Ծ. վարդապետ Գալէմքարեանին, Եզնիկ Պապայեան և Վահրամ Նազարէթեան վարդապետներին։ Կեսարիոյ համար Վահան Յակոբեան, Խարով Պէհրիկեան և Անանիա Հազարապետեան վարդապետներին։ Կրօնական ժողովի տասնտարուց հետէ դիւանապետ Տիրայր վարդապետը նշանակուեց Բաբերդի առաջնորդական տեղապահ. և Տ. Հմայեակ քահանայ Էքսէրճեանը նշանակուեց դիւանապետ։ Ենիգաբուի թաղ, խարբերդի խնդրանքի հիման վերայ տեղ-

այն քարոզիչ կարգուեց Տ. Եղիշէ Ծ. վարդապետ Գալֆա-յեանին։

Բուլգարիայի հայոց առաջնորդութիւնը

Վաղուց հետէ Կ. Պոլսոյ հայ պատրիարքարանը դիմումներ էր անում բոլգար կառավարութեան այնտեղ հայ առաջնորդական աթոռ հաստատելու համար։ Բոլգար կառավարութիւնը խուսափողական պատասխաններ էր տալիս։ Կ. Պոլսոյ Բոլգար դեսպանը մի անգամ ևս, ի միջի այլոց, յայտնեց, որ եթէ այնտեղ պէտք է հայ առաջնորդ, պէտք է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կողմից լինի և ոչ Կ. Պոլսոյ պատրիարքի, որի իրաւասութիւնը միայն Թուրքիայով է սահմանափակուում։ Այժմ, ինչպէս հաղորդում են լրագրները, բոլգար կառավարութիւնը, որոշ թէութիւններով, համաձայնել է հայ առաջնորդութիւն հաստատելու։ և «Բիւզանդիոն» (յուլիս 6-ին) գրում է այս առիթով։

—Այսօրուան Խառն ժողովոյ մէջ նկատողութեան պիտի առնուի Պուլկարահայոց Առաջնորդութեան հաստատութեան համար պատրաստուած ծրագիրը, ասկէ առաջ կատարուած քանակցութեանց հիման վրայ։ Այս ծրագրին մէջ ըսուած է թէ Առաջնորդարանը Սոֆիա պիտի ըլլայ, առաջնորդը պիտի ընտրուի Թաղ. Խորհուրդներու դիւաններուն մասնակցութեամբ և ընտրուած օրէն պուլկարահպատակ պիտի ըլլայ։ Իր պաշտօնն ոչ թէ վարչական և կրթական այն խնդիրները պիտի ըլլան ուրոնց մասին առաջիւթիւն ըրած է կառավարութիւնը՝ այլ զուտ ամուսնական և կրօնական խնդիրներ։ Ինքն նախագահն է Թաղ. խորհուրդներու և Հոգաբարձութիւններու, ինչպէս նաև եկեղեցական ժողովներու։ Պաշտօնական առիթներու մէջ Պուլկարահայոց ներկայացուցիչը պիտի ըլլայ կառավարութեան մօտ։ Հոգ պիտի տարուի, որ պուլկարահպատակ ուսուցիչներ հատնին, ինչպէս երկրին կրթական օրէնքը կպահանջէ և կառավարութիւնը՝ ինչպէս ուրիշ աբգերու՝ նոյնպէս Հայոց Առաջնորդին որոշ թոշակ մը վճարելու պարտաւոր պիտի ըլլայ։

Պարոցական ծրագիր.

Խառն ժողովը որոշեց Արմաշի դպրեվանքի փոխ-վանահայր Մեսրոպ Ծ. վարդապետի ուղարկած վանքի դպրո-

ցոցի վեցամեայ շրջանի ուսման ծրագիրը, որպէս կրօնական բարձր դպրոց, առաջարկել կառավարութեան ի վաւերացումն։

Ճալա կղզու հայերը

—Ճալա կղզիի Հայերու ընդհ. թիւն հազարի կհասնի, կգրեն նոյն տեղէն։ Միայն Սուրապայա քաղաքին մէջ 300-ի չափ Հայ կայ եղեր։ Վերջին ժամանակներս կղզիին Հայերուն մէջ տեսնուեր է ազգային զգացումին արթննալը։ Հարուստ գործարանատէր Աբգարեան փափաք յայտներ է իր միջոցներով Հայոց եկեղեցի մը շինել, եթէ գաղութն յանձն առնէ եկեղեցիին քահանան ապրեցնելու հոգը։ Գաղութի Հայերուն ժողովը որոշեր է 4000 ռակիի չափ գումար մը հանգանակել։ Արդէն հաւաքուած է մօտ 2000 ռակիի։

Բիւզանդիոն

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Թերգեան պատրիարքը հրաժարուած.

Հեռագրական գործակալութիւնները հրատարակել էին արդէն հայ-կաթոլիկների պատրիարք Թերգեանի հրաժարական տալու լուրը, այժմ «Բիւզանդիոնը» (յուլիս 8) գրում է.

«Հայ–հռոմէական հաստատակութիւնը, որ գնահատելի եռանդով ու կորովով մղեց իր արդար պայքարը Թերգեանի հակազգային գործունէութեան հանդէպ, կը տանի յաղթանակը, ստիպելով Թերգեանն որ իր հրաժարականը դրկէ։ Անոնք, որ կը թերահաւատէին թէ հաստատակութիւնը չպիտի կրնայ գլուխ ելլել, անշուշտ ուրախութեամբ պիտի լսեն թէ Թերգեան՝ համոզուելով որ ազգին նոյն իսկ ամենէն թունդ պահպանողական տարրերն իր դէմ հանելէ ետք այլ ևս իր պաշտօնը չի կրնար շարունակել, Սպանիայէն, ուր «Հայաստանի Պատրիարք» տիտ-